ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.05.2018թ. թիվ 03/26-3/9125-18 գրությամբ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 21.05.2018թ. թիվ 09/611 գրության հիման վրա, 22.05.2018թ. թիվ 03/26-3/9125-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 11.06.2018թ. գրությամբ հայտնել է, որ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն 23.04.2018թ. հայտ է ներկայացրել և մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Կոմիտե) կողմից տրված եզրակացությունը, որոշել է Ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Սակայն, «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կարծիքով տեղի է ունեցել սխալմունք, քանի որ Ընկերությունը 23.04.2018թ. ժամը 10:02-ին Ընկերությանը սպասարկող բանկի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակից թիվ 679 վճարման հանձնարարականի միջոցով թիվ 900008000490 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարել է 4 000 000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարում, որը Ընկերության խնդրանքով 16.05.2018թ. հաստատվել է Բանկի կողմից և տրամադրվել է Ընկերությանը: «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն այնուհետև 23.04.2018թ. ժամը 18:00-ից հետո ուղարկել է «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցության հայտը:

Վերոգրյալով պայմանավորված՝ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն նաև 15.05.2018թ. դիմել է Կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն 23.04.2018թ. (հայտ ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, համոզվելու համար, թե 23.04.2018թ. ունեցած ժամկետանց հարկային

պարտավորությունները ինչքան են կազմել, և արդյո՞ք վճարված գումարը լիովին բավարարել է վերը նշված օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունները մարված համարելու համար:

Ի պատասխան վերոգրյալ գրության, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին 16.05.2018թ. տրվել է թիվ 2663 տեղեկանքը, համաձայն որի՝ Ընկերությունը 23.04.2018թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ.

- ավելացված արժեքի հարկի գծով՝ 510 180 ՀՀ դրամ պարտավորություն և 1147 ՀՀ դրամ տույժ,
- եկամտային հարկի գծով՝ 569 196 ՀՀ դրամի պարտավորություն և 1281 ՀՀ դրամ տույժ:

Ընկերությունը նաև ունեցել է հարկային պարտավորություն շահութահարկի գծով՝ 10 700 256 ՀՀ դրամի չափով, սակայն այն ժամկետանց չի եղել, ինչպես նաև որևէ տույժ կամ տուգանք հաշվարկված չի եղել, քանի որ շահութահարկի գծով պատրավորությունների մարման վերջնաժամկետ է նախատեսված մինչև 25.04.2018թ., ինչն ամրագրված է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ընկերությունը գտնում է, որ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (23.04.2018թ.) հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել ժամկետանց որևէ պարտավորություններ, քանի որ որպես բարեխիղճ հարկատու կատարել է օրենսդրությամբ սահմանված բոլոր վճարումները, իսկ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին Կոմիտեի եզրակացությունը համակարգի սխալ հաշվարկման արդյքունքում է եղել:

Ընկերությունը խնդրել է հաշվի առնել վերոգրյալը և «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն կից ներկայացրել է՝

1. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 16.05.2018թ. թիվ 2663 տեղեկանքի պատճենը

2. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի թիվ 679 վճարման հանձնարարականի միջոցով թիվ 900008000490 միասնական գանձապետական հաշվեհամարին կատարված 4 000 000 ՀՀ դրամի հարկային պարտավորությունների մարման վերաբերյալ վճարման հանձնարարագրի պատճենը,

3. ՀՀ ֆինանսների նախարարություն և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ուղարկված դիմումների պատճենները:

«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/61 ընթացակարգի շրջանակներում 25.05.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.05.2018թ. թիվ 09/611 գրությամբ հայտնել է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին 23.04.2018թ. հայտ է ներկայացրել «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն: Գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. թիվ 3 որոշմամբ 85-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն: 03.05.2018թ. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված տվյալների ճշտման վերաբերյալ: Գնահատող հանձնաժողովի 10.05.2018թ. թիվ 4 որոշմամբ արձանագրվել է, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2018թ. տրված եզրակացության համաձայն՝ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից հայտը ներկայացվելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների չափը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/61 ընթացակարգի շրջանակներում 25.05.2018թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 23.04.2018թ. հայտ է ներկայացրել «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն:

2. Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 088 078 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

5. Համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.04.2018թ. դուրս գրված թիվ 000640 վճարման հանձնարարագրի՝ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից 23.04.2018թ. կենտրոնական գանձապետարանի 900008000490 միասնական հաշվեհամարին հարկային պարտավորությունների մարման գծով կատարվել է 4 000 000 ՀՀ դրամի վճարում:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2018թ. թիվ 03/26-3/9125-18 գրությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի

21.05.2018թ. թիվ 09/611 գրությունը և կից փաստաթղթերը, «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի 11.06.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե '

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի

կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***23.04.2018թ. հայտ է ներկայացրել «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն:***

Ընկերությունը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերությունը Ընթացակարգի 85-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 03.05.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.05.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 1 088 078 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Այսպես՝ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2018թ. տրամադրված եզրակացության՝ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա (23.04.2018թ.) դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ ***1 088 078 ՀՀ դրամի չափով:*** Միևնույն ժամանակ, Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ՍՑ-ԱՄ-2018/61 ընթացակարգի քննության շրջանակներում ներկայացրել է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.04.2018թ. դուրս գրված թիվ 000640 վճարման հանձնարարագիրը, որի համաձայն՝ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից 23.04.2018թ. ժամը 10:02-ին կենտրոնական գանձապետարանի 900008000490 միասնական հաշվեհամարին ***հարկային պարտավորությունների մարման գծով կատարվել է 4 000 000 ՀՀ դրամի վճարում:***

Դրա հետ մեկտեղ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 16.05.2018թ. տրված թիվ 2663 տեղեկանքը, համաձայն որի «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն 23.04.2018թ. դրությամբ ավելացված արժեքի հարկի գծով ունի 511 327 ՀՀ դրամի (որից 510 180 ՀՀ դրամը՝ վճարման ենթակա գումար, իսկ 1 147 ՀՀ դրամը՝ հաշվարկված տույժ) չափով և եկամտահարկի գծով 570 477 ՀՀ դրամի (որից 569 196 ՀՀ դրամը՝ վճարման ենթակա գումար, իսկ 1 281 ՀՀ դրամը՝ հաշվարկված տույժ) չափով ժամկետանց հարկային պարտավորություն և 10 700 256 ՀՀ դրամի հարկային պարտավորություն:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ուսումնասիրելով «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.04.2018թ. դուրս գրված թիվ 000640 վճարման հանձնարարագիրը, որի համաձայն Ընկերությունը 23.04.2018թ. (հայտը ներկայացնելու օր) կատարել է հարկային պարտավորությունների մարման գծով կատարվել է 4 000 000 ՀՀ դրամի վճարում, ինչպես նաև այն համադրելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 20 բաժնի կողմից 16.05.2018թ. տրված թիվ 2663 տեղեկանքի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 10.05.2018թ. տրամադրված եզրակացության հետ, գտնում եմ, որ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը հայտ ներկայացնելուց առաջ (23.04.2018թ. ժամը 10:02) կենտրոնական գանձապետարանի 900008000490 միասնական հաշվեհամարին կատարել է հարկային պարտավորությունների մարման համապատասխան գումարի վճարումները և համոզված լինելով հարկային պարտավորություն կատարած լինելու փաստի մեջ, վերջինս նույն օրը 23.04.2018թ. ժամը 16:03-ին հայտ է ներկայացրել «ԳՀԱՊՁԲ-2018/15-5-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով: Տվյալ դեպքում գտնում եմ, որ Ընկերության մոտ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորության փաստի արձանագրումը պայմանավորված չի եղել «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ի դրսևորած վարքագծով, ուստի հնարավոր չէ նաև արձանագրել Ընթացակարգի շրջանակներում Ընկերության կողմից ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.05.2018թ. թիվ 03/26-3/9125-18 գրությամբ «Ար-Մեդիկա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01268548) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**